

ԻՆՉՈ՞Ւ ԸՆՏՐԵԼ ԱՅՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Արագությունը, որով ԶՈՎԻԴ-19-ով պայմանավորված տնտեսական ճգնաժամը վրա հասավ, հանկարծակիի բերեց ձեռնարկություններին: Ամենաձանր հարվածը կրեցին միկրո, փոքր և միջին ձեռնարկությունները (ՄՓՄՁ-ներ): Շատերը չունեին ճգնաժամի արձագանքման ծրագրեր կամ հասկացան, որ իրենց ծրագրերը չափազանց անձկուն են:

Այդպես չեղավ չափորոշիչներ իրականացնող ՄՓՄՁ-ների դեպքում: Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ)՝ հարցումների վրա հիմնված [ազդեցության գնահատումների](#) արդյունքները վկայում են, որ այս ձեռնարկությունները կարողացել են պահպանել իրենց արդիականությունը և նույնիսկ բարգավաճել արտադրությունը վերափոխաստվորելու և առցանց առևտրի ոլորտում իրենց ներգրավվածությունը մեծացնելու միջոցով: Այդուհանդերձ, բազմաթիվ ՄՓՄՁ-ներ տարակուսում են, թե արդյոք արժի իրականացնել չափորոշիչները: Այս ուսումնական ծրագիրը ՄՓՄՁ-ներին ծանոթացնում է չափորոշիչների իրականացման տարբեր հայեցակետերին և առաջարկում է ռազմավարական պլանավորման օգտակար գործիքներ:

ՄԱԿ ԵՏՀ-Ի ՄԱՍԻՆ

ՄԱԿ ԵՏՀ-ն Միավորված ազգերի կազմակերպության հինգ տարածաշրջանային հանձնաժողովներից մեկն է, որի առաքելությունն է նպաստել տնտեսական ինտեգրման ընդլայնմանն ու համագործակցությանն իր հինգ մասնակից պետությունների միջև: ՄԱԿ ԵՏՀ-ն աջակցում է կայուն զարգացմանը և տնտեսական բարգավաճմանը՝

- քաղաքական երկխոսության,
- միջազգային իրավական գործիքների շուրջ բանակցության,
- իրավակարգավորումների և նորմերի մշակման,
- լավագույն փորձի փոխանակման և կիրառության,
- անցումային տնտեսությամբ երկրների համար տեխնիկական համագործակցության սպառնալից միջոցով:



Ազգերի պալատ
Խաղաղության պողոտա 8-14
CH - 1211 Ժնև 10,
Շվեյցարիա



Կառուցենք ավելի ուժեղ տնտեսություն ԶՈՎԻԴ-19-ից հետո

Չափորոշիչների իրականացում միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների դիմացկունության բարելավման նպատակով



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի համառոտ նկարագրություն.....	2
Մեկնարկ	3
Դասընթացների հերթականություն	4
Ձեռք բերված գիտելիքներ	5



ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Դասընթաց 1

Կանգ առ-Շունչ քաշիր-Վերականգնողական-Գնահատիր ռիսկը.

Ի՞նչ է կատարվել, և ի՞նչ կարող ենք անել:

Ինչպես միջազգային չափորոշիչները կարող են օգնել բարելավելու Ձեր իրավիճակային իրազեկվածությունը և մշակելու ռիսկերի կառավարման նորարարական ռազմավարություններ:



Դասընթաց 2

Կապ հաստատեք. մենք ունենք արդյոք անվտանգության ցանցեր, որոնց մասին տեղյակ չենք:

Որակի ենթակառուցվածքների և համաշխարհային մատակարարման շղթայի դերակատարների հետ ռազմավարական դաշինքներ հաստատելու վերաբերյալ համառոտ ուղեցույց:



Դասընթաց 3

Վերցրեք վիրակապերը. որոշեք առաջին օգնության պարագաները:

Գրասենյակ ապահով վերադարձի ապահովման այլընտրանքային մեխանիզմներ, որոնք հիմնված են միջազգայնորեն ճանաչված չափորոշիչների վրա:



Դասընթաց 4

Ի գործ. թող սկսվի վերափոխումը:

Որակի, դիմացկունության և բիզնեսի շարունակականությանն ուղղված չափորոշիչներ և առնչվող հասկացություններ:



Դասընթաց 5

Հավաքել ուժերն ու կրկին վեր հասնել. ի՞նչ մարտահրավերներ են սպասվում հաջորդիվ:

Համաշխարհային աղետների, ինչպես օրինակ՝ ԲՈՎԻԴ-19 համաճարակի և կլիմայական փոփոխության փոխադարձ կապը:



Մինչև 3 օր առցանց



Ինքնուրույն դասընթացներ, օրական 2-3 ժամ



Մովորեք աշխարհի տարբեր ծայրերում գտնվող համախոհ ձեռնարկատերերի համաշխարհային ցանցի հետ միասին



Օգտագործեք դյուրակիր կամ անհատական համակարգիչ



Անվճար հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://e-learning.unece.org>


Դասընթացների հերթականությունը տրամաբանական է
Դասընթացները տրամաբանորեն հաջորդում են իրար՝ Ձեզ ծանոթացնելով չափորոշիչների իրականացման տարբեր հայեցակերպերին: Դրանք նաև համապատասխանում են այն քայլերի հաջորդականությանը, որոնցով անցնելու էք, որպեսզի ճանաչեք և չափորոշիչների իրականացման ծրագիր կազմեք, այդ թվում՝ այն չափորոշիչների, որոնք թույլ կտան Ձեր աշխատավայրը և արտադրական տարածքները համապատասխանեցնել Առողջության համաշխարհային կազմակերպության անվտանգության պահանջներին: Ուստի հարկավոր է սկսել առաջին դասընթացից: Եթե ցանկանում եք սկսել այն դասընթացից, որն առավել կարևոր է Ձեր բիզնես ռազմավարության համար, հնարավոր է՝ դժվարությունների հանդիպեք, քանի որ դասընթացները աստիճանաբար բարդանում են, և դրանցից մեկում ամփոփված գիտելիքները կիրառվում են հաջորդող դասընթացներում:

Երբ ավարտում եք մեկ դասընթաց

Հանձնեք թեստը, որպեսզի դասընթացն ավարտելու վկայական ստանաք: Այնուհետև փակեք պատուհանը, որպեսզի սկսեք հաջորդ դասընթացը:

Հայտնեք Ձեր կարծիքը:

Խնդրում ենք ժամանակ գտնել և լրացնել գնահատման հարցաշարը:



Այս դասընթացի ավարտին Դուք՝

- կունենաք հստակ պատկերացում չափորոշիչների և Ձեր ձեռնարկության դիմացկունության բարելավման, աճի հեռանկարների և մրցունակության հարցում դրանց նշանակության մասին.
- կստանաք ուղղորդում ՔՈՎԻԴ-19-ի համատեքստում Ձեր ողջ աշխատուժի անվտանգությունն ու առողջությունն ապահովելու վերաբերյալ.
- կկազմեք պատկերացում հիմնական չափորոշիչների մասին, որոնք նախատեսված են բարելավելու՝
 - արտադրանքի որակը
 - շրջակա միջավայրի կառավարումը
 - էներգաարդյունավետությունը
 - դիմացկունությունը և բիզնեսի շարունակականությունը
 - շրջանաձև արտադրությունը
 - սոցիալական պատասխանատվությունը
 - ռիսկերի կառավարումը
 - նորարարությունը.
- կտիրապետեք գործիքների, որոնք Ձեզ կօգնեն առանձնացնելու Ձեր բիզնեսի համար նշանակություն ունեցող չափորոշիչները և սահմանելու բարեհաջող իրականացման ծրագրեր.
- ծանոթ կլինեք գործիքների, մեխանիզմների և պրակտիկաների, որոնք Ձեզ կօգնեն հաղթահարելու աշխատավայրի հետ կապված մարտահրավերները և զարգացնելու առաջնորդելու և մարտահրավերները հնարավորությունների վերածելու Ձեր ունակությունը:

